# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՓԱԹԱՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**<<7>> մարտի 2014թ.**

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2014 թվականի մարտի 7 –ի N 28 Ա որոշումը՝

ՀՀ Գեաղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ՝ Ի.Ասատրյանի, ՀԳՄՀ բաժնի վարիչ Հ. Օհանյանի, մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի վարիչի տեղակալ Մ. Ղուրշուդյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ Գոռ Ղազարյանի կողմից իրականացվեց վարչական հսկողություն ՏԻՄ-ի պարտադիր լիազորությունների և հողօգտագործման բնագավառներում ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ համայնքում:

1.Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները վարչական հսկողության արդյունքների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ծափաթաղ համայնքի ղեկավարին:

ԻՎԱՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՐԱՆԴԻԿ ՕՀԱՆՅԱՆ

ՄԱՐԱՏ ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԳՈՌ ՂԱԶԱՐՅԱՆ

Համայնքի ղեկավար ԹԱԳՈՒՀԻ ԲՈՅԱՂՉՅԱՆ